մեք հետեւեսցուք, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի. զոր եւ ձեզ կամիմ նմին հետեւել. ընթերցիք եւ տեղեկասցիք եւ հետեւեսջիք ճշմարտութեան:

Իմասջիք որ այս չխոթման սկիզբն ի կիրակոս անուն ումեմնէ [21] աբեղայէ եղեւ, որ էր նա ի Պոնդոսէ որ այժմ ասի Տրապիզոն. զի էր հայր նորա յազգէն Յունաց Քաղկեդոնի, եւ մայր նորա հայ ազգաւ. մեռեալ հայրն՝ եւ մայրն բերեալ ի մէջ Հայոց զնա եւ եւս ուսումն. եւ ուսաւ զգիրս Հայոց, եւ եղեւ աբեղայ. եւ զնաց առ Պետրոս կաթողիկոսն Սըսայ եւ հմտացեալ զրոց. քայց հանապազ զքաղկեդոնիս յարդէր [22] եւ դովէր եւ զկրօնս Հայոց քամահէր. զոր ազդեցին Պետրոս կաթողիկոսին. եւ նա բազում անգամ խրատեալ եւ նա անլուր եղեւ. զոր յեւոյ ի բաց եհան յինքենէ եւ նա զնաց յԵրուսաղէմ. եւ ի նոյն տեղին եւս զնոյն առնէր. զՅոյնս դովէր եւ զՀայս դարովէր. զի զրաղումս չխոթեաց. զի էր վերին երեւակայութեամբն հայ եւ կրօնաւոր եւ առաքինի. եւ ներքին [298 ա] մարդովն եւ խորհրդով երկաբնակ եւ Քաղկեդոնիկ [23]: Զոր անդ յԵրուսաղէմ ազդեցին զդրծս նորա վարդապետի ումեմն Գրիգորի եւ մականուն Բուք վերաձայնելոյ. եւ նա յԵրուսաղէմ նզովեալ զնա եւ ի սեղանատեղւոյ եւ ի ժամատեղւոյ աքսորեալ. զոր յեւոյ ի մէջ անկեալ

---

[21] Ջ. ումեմ:
[22] Ջ. յազէր:
[23] Ջ. քաղկեդոնէ: